

Հավելված
Ազգային ժողովի նախագահի
2021 թվականի Ք. 08 17 կարգադրության

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2215-Ն ՈՐՈՇՄԱՆ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾԻ 1024 ԾՐԱԳՐԻ 11001 ՄԻՋՈՑԱՌՄԱՆ «ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ» ՀՈԴՎԱԾՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ

1. Սույն հավելվածով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման 4-րդ հավելվածի 1024 ծրագրի 11001 միջոցառման՝ «Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված դրամական միջոցները (այսուհետ՝ դրամական միջոցներ) Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) աշխատողների միջև բաշխելու չափանիշները և կարգավորվում են դրանց հիման վրա աշխատակազմի աշխատողներին դրամական միջոցները վճարելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Դրամական միջոցների՝ աշխատակազմի աշխատողների միջև բաշխումն իրականացվում է ամսական վճարումների (այսուհետ՝ վճարում) տեսքով:

3. Յուրաքանչյուր ամսվա վճարումը կատարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը:

4. Վճարումները կատարվում են աշխատակազմի այն աշխատողներին, ովքեր՝

1) Տվյալ ամսվա ընթացքում աշխատել են առնվազն 10 աշխատանքային օր՝ ներառյալ ամենամյա և (կամ) չվճարվող արձակուրդի, հղիության և ծննդաբերության արձակուրդի, ժամանակավոր անաշխատունակության, վերապատրաստման, գործուղման ժամանակահատվածները, բացառությամբ աշխատողի նախաձեռնությամբ վերապատրաստման գործուղվելու այն ժամանակահատվածի, որի ընթացքում գործատուի հայեցողությամբ վարձատրություն չի նախատեսվում,

2) Տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրվա դրությամբ աշխատակազմի աշխատող հանդիսանում են ավելի քան 1 ամիս:

5. Վճարումները չեն կատարվում աշխատակազմի այն աշխատողներին, ովքեր՝

1) Տվյալ ամսվա ընթացքում ազատվել են աշխատակազմում գրադեցրած պաշտոնից,

2) Տվյալ ամսվա ընթացքում ենթարկվել են կարագապահական պատասխանատվության:



Տ.ԳԱԼՍՅԱՆ